ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՈՒՍԱԼԵՌԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИР МАРЗ
МЕРИЯ СЕЛА
МУСАЛЕР

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, VILLAGE HALL OF MUSALER

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

13.11.2015թ.
թիվ. 238

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Ի կատարումն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասի՝ Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի կողմից 2016 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 79-Ն որոշումը:

Միաժամանակ հայտնվում է, որ նշված որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր՝ 2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 04702116

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 4 » նոյեմբերի 2015 թվականի N 79-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի կողմից 2016 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

	ԿՈՂՄ (5)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
ՔՆԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ			
ԽԱՉԻԿ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ			
ՀԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ			
ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱՋՅԱՆ			
ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ			
ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4 N 79Ա ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Համայնքային ենթակայության մանկապարտեզում երեխաների պահպանման համար ծնողական վճար սահմանել հինգ հազար դրամ.
   1) Բնակչության առանձին խմբերի համար վճարների արտոնություններ սահմանել հետևյալ չափերով.
      ա) միակողմանի ծնողազուրկ համայնքի բնակիչ հանդիսացող երեխաների համար՝ երկու հազար դրամ.
      բ) երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ անվճար.
      գ) փարոսի համակարգում ընդգրկված ընտանիքների երեխաների համար՝ երկու հազար դրամ:
2. Աղբահանության վճար սահմանել՝ համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 դրամ:
   1) Արտոնություններ սահմանել հետևյալ չափերով՝
      ա) փարոսի համակարգում ընդգրկված ընտանիքների անձանց համար՝ ամսական 50 դրամ:
      բ) Հինգ և ավելի անդամ ունեցող ընտանիքների ամսական գումարի չափ սահմանել հինգ հարյուր դրամ:

Առաջատար մասնագետ Գ. Սայադյան